

1284-ի այս ձեռագիրը ունի հետաքրքրական կէտ մըն ալ : Հ. Սարգիսեան կը վկայէ որ վերի բուն յիշատակարանին «անմիջապէս կը յարի մի եւ նոյն գրչութեամբ (բայց բնագրի խոշորկեկ բոլորգրով) երկրորդ ստացողի կողմէն» յիշատակարան մը ուր ի մէջ այլոց կ'ըսուի «Արդ՝ որք հանդիպիք այսմ տառիս , յիշեջիք զվերջին ստացողս Վարդան եւ զծնողսն իմ զԹորոս , եւ զեղբայրն իմ զԱնդրէաս եւ զամենայն ազգայինս իմ եւ աստուած զձեզ յիշէ» : Դժբախտաբար այս յիշատակարանը անթուական է : Հ. Սարգիսեան կը գրէ «Եթէ սոյն Թորոսը նոյն է գրչին հետ , կը հետեւի որ Վարդան քահանայն ալ , այն է վերջին ստացողն՝ անոր որդին է , եւ թէ Նորոգիսէն քիչ վերջ Լստացող եղեր է մատենիս» : (5)

Իրականը դժուար է վերջին վճիռ մը տալ այս մասին : Թորոս սովորական անուն մըն է : Յետոյ Թորոս Տարօնեցի ոչ մէկ ատեն ամուսնացած եւ զաւակներու տէր ըլլալը կը յիշէ , թէեւ ատիկա պատճառ մը չէ որ զինքը ամուսնացած չի նկատենք : 1284-ին երբ գրչութիւնը կը կատարուէր Թորոս Տարօնեցի հագիւ 25 տարեկան մը ըլլալու էր , եթէ նոյն իսկ ըլլար 30 տարու դժուար թէ «սրբասնեալ քահանայ Վարդան» որդի մը ունենար : Եթէ իրապէս Վարդան քահանայի հայր Թորոսը մեր Տարօնեցին է այն ատեն պէտք է խորհինք որ 1284 գրչութիւնը Նորոգէս միայնակեցի համար կատարուելէ վերջ , դարձեալ ինկած է Տարօնեցիի որդւոյն Վարդան քահանայի ձեռքը , որ ասոր տիրացած է իբր թանկագին աւանդ իր մեծանուն հօր : Այսպէս ուրեմն Թորոս Տարօնեցի դուցէ ամուսնացած էր եւ ունեցած է երկու զաւակներ (եթէ ոչ աւելի) , Վարդան քահանայ եւ Անդրէաս : Բնական է ասիկա ներկայ տուեալներով չէ կարելի հաստատել :

Այսպէս Թորոս Տարօնեցին առաջին անգամ մեզի կը ներկայանայ իբր «նորը եւ ընտիր» գրչութեամբ գրիչ մը : Ինքզինքը կը կոչէ «գրիչ» , առանց ակնարկելու մանրանկարիչ կամ ծաղկող մը ըլլալը : 1284-ի այս ձեռագիրը սակայն քիչ ինչ ծաղկեալ է : Թողունք որ Հ. Սարգիսեան նկարագրէ ձեռագրին գեղարուեստական ամբողջութիւնը : «ԶԱՐԴԱԳԻՐՔ ցանցառ են , միագոյն՝ աղօտ կամ լաւ եւս ջնարակային կարմիր , թուշնագիր , վիշապագիր եւայլն , ճաշակաւոր . իսկ... ԿԻՍԱՆՈՒ-

5) Անդ էջ 811-812 :